

դասաւորուին և որոշուին մանկական հասակի և հասունութեան համեմատութեամբ: Ներկայումս մեր մանկական գրականութեան մէջ, անկասկած, առաւել չափազանց վնասակար և անօգտակար հատուածներ կան քան իւրեանց կոչման բաւականացուցիչ երկասիրութիւններ: Ես կարծում եմ որ մանկական հրատարակութեանց ամեն տեսակ քննադատութիւնները պէտք է նշանաւոր անել ու նենան մեր մանկավարժական պարբերական գրականութեան մէջ և երբեմն մանաւանդ մեծ արձակուրդներից առաջ, անհրաժեշտ է հրատարակել այդպիսի քննադատական յօդուածների ժողովածուներ, որոնք ծնողների և դաստիարակներին իրր ուղեցոյց և ձեռնարկ կը ծառայեն: Միայն այս ճանապարհով հնարաւոր է յաջողութեամբ կռիւ մղել սփայն մայրենի, այլ և օտարազգի հետզհետէ ծաւալուող և միայն թերթեր սեւացնող և վնասնող մանկական գրականութեան դէմ:

(Թարգմանութիւն)

Ղ. Ս. Գ.



ՌԵՍՈՆՏԻՉԸ

ԻՐԵՆԷ ԳՊՐՈՏԱԿԱՆ ՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ:

Իւրաքանչիւր ուսուցիչ պարտաւոր է երբեք չմոռանալ մեր (ծխական) գայրօցների իսկական նպատակը, այն է մատաղ սերնդին Հայոց Եկեղեցու հաւատալիքն և գիտութիւնը ուսուցանել, ժողովրդի գիտակցութեան մէջ մտցնել կրօնական — բարոյական գաղափարներ և ի նպատակ դորան արծարծել օգտակար գիտելիքներ: Նա որքան աւելի ձգտի գէպի իւր գործունէութեան բուն նը պատակը, նոյնքան էլ համակրութիւն — սէր կատանայ ժողովրդի կողմից, նոյն չափով էլ կկարողանայ գրաւել իւր սաներին . . . Զայտնի է որ մեր ծխական գայրոցներում սովորում են գլխաւորապէս ժողովրդի ամենալըքաւոր գասակարգի, այսինքն արհեստաւորնե-

րի, երկրագործների և մասամբ վաճառականների որդիները, որոնք դպրոց մանկիւս գաստիարակութեան ու կրթութեան հօան անգամ առած չեն լինում և մինչև անգամ աւելի վատ՝ քան թէ լու գաղափարներ են ունենում և անսովոր են լինում թէ դրպրօցական կարգն ու կանոնին և թէ կանոնաւոր աշխատութեան: Սակայն ուսուցիչը պէտք է նպատակադարմար կերպով յարմօրի այդ երեխաների մասաւոր զարգացման աստիճանին և բարոյական գրօթեանը և պատրաստէ նրա մէջ ապագայ հասակ առած երկիւղած և բարեպաշտ մարդուն, որը իւր սեփական արդար աշխատանքով վաստակել կարողանայ իւր ապրուստը, նա պէտք է պատրաստէ հասարակութեան ապագայ օգտակար անգամը, տալով նրան այն գիտութիւնների սկզբունքը, որոնք հիմն պիտի կազմեն նրա մտաւոր-բարոյական զարգացման և պիտանի լինեն գործնական կեանքում: մի խօսքով ուսուցիչը պէտք է իւր անպատրաստ սաների մէջ զարգացնէ և հաստատէ այն բոլոր յատկութիւնները, որոնք անհրաժեշտ են Հայոց Եկեղեցու հաւատարիմ որդի, բարեխիղճ ու գործող մարդ, բնաանիքի արժանաւոր գլուխ և հասարակութեան օգտակար անգամ՝ գառնալու համար, իսկապէս երեխաները առաջին տեղն են բռնում թէ իրանց ծնողների սրտում, թէ բնաանիքի, թէ հասարակութեան և թէ ամբողջ մարդկութեան մէջ, որովհետեւ նրանց մէջ է ամփոփւում ժողովրդի ամբողջ ապագան: Այդ իրողութիւնը իրանց յիշողութեան մէջ թաքմ պիտի պահեն յատկապէս ուսուցիչները, որովհետեւ երեխաներն են գրանց գործունէութեան կենտրոնը, երեխաներն են մշակելու լայնատարած, բայց արգուանդ գաշտը, որը կարօտ է արժանաւոր սերմերի, վերջապէս երեխաների բարձր արժանիքների մէջ է պարունակւում և ուսուցչական վեհ կոչման բարձր նշանակութիւնը: Բայց գժբաղդաբար կան ուսուցիչների, որոնք առանց բմբունելու այդ անուրանալի ճշմարտութիւնը, շատ ան-

գամ ասում են, «է՛հ, երեսայ է, ոչինչ չի հասկանում...» և դեռալիթի աշակերտների ներկայութեամբ խօսում են անտեղի բաներ, վիճաբանում են նրանց հասցէին յիշողներ-լուսանկրներ են ուղղուած առանց միտածելու թէ ամենը կապաւորուի երեսայի թարմ և անտարտ ուղեղի մէջ և սպագայում կունենայ իւր փառ հետեւանքները:

Երեսան մի անորոշ էակ է, որ կարող է լինել սման ի՞նչ և ոչինչ նա ունի զարգանալու ոյժ, բայց նա գէ՛ռ չի գործում ունի ընդունակութիւններ, բայց նորա ծածկուած են, ունի անձնաւորութիւն, բայց նա դեռ տմուր չէ: Այդ բոլորը յանձնուած է ուսուցիչին... որքա՛ն մեծ հաւատարմութիւն... Այստեղ անհոգութիւնը աւելի քան դատարարութի է: Աւուցիչը պարտաւոր է մանրակրկիտ կերպով ուսումնասիրել երեսային, առանց դրան նա իրաւունք չունի այդ սուրբ կոչմանը ծառայելու: «Նախ պէտք է երեսայի հետ խօսել կարողանալ և սպա իրաւունք ստանալ նրա հետ խօսելու» ասում է Ա. Կոմենսկին: Հարկաւոր է ճանաչել և սիրել երեսային, առանց դրան ամբողջ մանկավարժութիւնը ունի է: Եթէ քիչ հեռու գնանք և քննենք հարցը քրիստոնէական տեսակէտից, այն ժամանակ երեսայի մեծ նշանակութիւնը, նրա ուսուցանելու կրթելու պարտականութեան վիճութիւնը և որբութիւնը աւելի պարզ, աւելի ակնհայտ էլի՛ն: Զիտուի օրհնութիւնը (երեսաներին ուղղած), նրա քարոզները երեսաների մասին ցոյց են տալիս մեր կրօնի Հիմնադրի հայեացքները երեսայի մասին: «Յիշեցէք, որ Աստուածային պատկեր է երեսայի հոգին, երեսան կոկոնի մէջ ծածկուած մի ծաղիկ է, որ մի որոշ ժամանակի ընթացքում պէտք է բացուի և զարգանայ... ուսուցիչը նրան զարգացնելու օժանդակիչ գործիքն է... ասում է Հենրիխ Պետտալոցին: Ուրիշ մանկավարժներ երեսային մի փոքր աշխարհ են անուանում: Աւուցիչ պարտականութիւնն է բանալ այդ աշխարհը և աճեց-

նել նրա լաւ կողմերը: Մարդկային էութեան ամբողջ հարստութիւնը պարունակում է երեսայի մէջ, ուսուցիչ պարտականութիւնն է արթնացնել, ուղղութիւն տալ կեանքի այդ ոյժին: «Միայն կրթութիւնն է, որ մարդուն իսկական մարդ է դարձնում, ասում է Մերսայօլսկին: Մարդկային ազատ-խելացի գործունէութեան սերմերը բնկած են լինում երեսայի բնաւորութեան մէջ. ուսուցիչ պարտականութիւնն է աճեցնել և արմատացնել նրանց:

Աւուցիչը նախ քան իսկական ուսուցում սկսելը պէտք է ուսումնասիրէ երեսայի բոլոր առանձնայատկութիւնները թէ մտաւոր և թէ հոգեկան, միեւնոյն ժամանակ աչքի տալով ունենալով և ընտանիքի, հասարակութեան, տեղական սոցիոթութիւնների և շրջապատող այլ պայմանների ազդեցութիւնը: Այդ ազդեցութեան գրոշմը երեսաների վերայ չափազանց ուժեղ և անժխտելի է լինում: Թէև երբեմն միանգամից չի նկատուում հարկաւոր է միայն բարձրացնել այդ դադունիքը ծակող քողը և այն ժամանակ ամեն բան կարգուի:

Աւուցիչը երբեք չպէտք է խորշի աշխատութիւնից: Մանկավարժական աշխատանքը գրաւիչ և զբաղեցուցիչ է. բաւական է միայն մի անգամ ճաշակել այդ պաշտօնի ազնիւ կատարման հոգեկան ուրախութիւնը և գրանից յետոյ ամենածանր աշխատանքն էլ շատ թեթեւ կ'ընկայ:

Սակայն չափազանց տխուր և ցաւալի երեսայի է, երբ ուսուցիչը գանգատ է ցոյց տալիս իւր պաշտօնից. — «Մարդ զղուում է միշտ միեւնոյն բանը կրկնելով, ասում են երբեմն: Արդիսի ցաւալի հայեացք... Այժմ և կենսունակութեամբ լի մատաղ սերնդի կրթութիւնը ձանձրալի է... Միթէ դա մի հասարակ արհեստ է, որ ձանձրացնէ մարդու:

Շատ անգամ էլ ծխական գպրոցների ուսուցիչները գանգատւում են, թէ տարրական ուսուցումը բոլորովին դատարկ և ոչ մի նշանակութիւն չունեցող մի գործ է — «մարդ չի

կարողանում իւր գիտութիւնը գործադրել մինչև անգամ մոռանում է: Ինչ որ գիտէր, ասում են դոքա: Այդ տեսակ տրտունջները ցոյց են տալիս միայն այն, որ կան մարդիկ որոնք կատարեալ անհոգութեամբ և անխոհմութեամբ են վերաբերւում դէպի ուսուցչութիւնը: Եթէ ուսուցիչը դասագրքից հետոն չգնաց, եթէ իւրաքանչիւր տարի կրկնէ միևնոյնը, ի հարկ է ինքն էլ կըթանայ, իւր աշակերտներն էլ սխառեմափառաբար կըթացնէ: Բայց չէ որ այդպէս վարւում են միայն Տէր Թովթիկի* նման խալիֆաները և ոչ թէ իսկական ուսուցիչները:

Իսկական ուսուցչութիւնը բաց է անում իւր պաշտօնակատարների առաջ մի բարդ, անսահման և բազմակողմանի ասպարէզ բեղմ: Նաեւ գործունէութեան: Նա բաց է անում ուսուցիչների առաջ երեխայական բնաւորութեան ամբողջ հարստութիւնը, որից օգտուելը ուսուցչից - իրանից է կախուած: Ով որ կկարողանայ թափանցել նրա բոլոր խորշերը, ով որ կհասկանայ նրա պահանջները, կըմբռնէ այդ վեհ կոյման մեծ նշանակութիւնը, նա երբէք չի ձանձրանայ աշխատութեան կարծեցեալ միակերպութիւնից, չի զգուշ պաշտօնի հեշտութիւնից:

Վերջապէս ով որ հետամուտ կլինի մեթօդների, գալոցական կարգապահութեան (дисциплина) փոփոխութեանը և կատարելագործութեանը, ով որ կջանայ զանազանատեսակ աւօրեայ մանկավարժական հարցերին լուծումն տալ, ով որ կնկրտի իւր նկատած թերութիւնները ուղղել, նա երբէք չի ըթանայ և չի հաւատարուի մեքենայական աշխատանքի հետ: Հաւատացած եմ, որ որքան բարձր լինի ուսուցչի զարգացումը, նրան նոյնքան գոյաւոր և հետաքրքիր կերևի տարրական ուսուցումը: Ամեն մի փորձուած մանկավարժ կխոստովանի, որ ամենահասարակ գիւղական ուսուցիչ - (ի հարկէ արժանաւոր) - լինելը ոչ չընչով հեշտ չէ միջնակարգ գալոցների ուսուցչութիւնից: Ահա վերագրեալի մասին ինչ

է ասում Կենեք. «ով որ երեխաների կրթութիւնը ձանձրալի և միակերպ է անուանում, ով որ անկարող է նուիրուել այդ գործին սիրով և ուրախութեամբ, նա ուսուցիչ չէ այդ բանի բուն նշանակութեամբ»:

Եւ իսկապէս եթէ ուսուցչութիւնը տաղտկալի է թւում, յանցաւորը ոչ թէ պաշտօնն է, այլ ինքը պաշտօնակատարը, որ չէ կարողացել ըմբռնել գործի էական գաղափարները:

Ուսուցիչը միշտ պէտք է աշխատի իւր գիտութեան պաշարը հարստացնել, անընդհատաբար սովորելով - (կեանքի գալոցում): «Ուսուցիչը որքան էլ սովորի՝ աւելորդ չէ, ասում է Ուշիսկին: Եւ իսկապէս եթէ ուսուցիչը հասկացել է ամենը, նա երբէք չի խօսի ըթմանալու կամ գիտեցածը մոռանալու մասին:

Ձանձրալի է երեխաների կրթութիւնը...: Այդպիսի բոլորը պարզօրէն ցոյց է տալիս, որ ուսուցիչը երբէք չէ մտածել իւր պաշտօնի մասին, երբէք չէ խորհել այն միջոցների և պայմանների մասին, որոնցով կարելի է ձեռք բերել աշակերտների համակրութիւնը և սէրը, որոնք կարող են եռացնել նրա գործունէութիւնը և առանձին գրաւչութիւն տալ ուսուցչութեանը: Աշակերտական կեանքն ունի իւր բազմազան ներքին և արտաքին երևոյթները, որոնց անուշագիր թողնելը մեծ անհոգութիւն է ուսուցչի կողմից: մանաւանդ որ այդ երևոյթները մեծ նշանակութիւն ունեն կրթական գործում: Իբրև օրինակ աւելորդ չլինի յիշել աշակերտի գալոց այցելելու հենց առաջին օրը: Ուսուցիչներից շատ քչերն են հասկացած այդ օրուայ առաւելութիւնը և նրա ազգեցութիւնը աշակերտի վերայ:

Առաջին տպաւորութիւնները միշտ ուժեղ են լինում: ուրեմն ուսուցիչը թող լրջօրէն մտածէ այդ մասին և ջանայ առաջին օրը երեխայի համար գրաւիչ և ուրախալի դարձնել: Եթէ աշակերտները հենց առաջին անգամից լաւ տպաւորութիւն ստանան, այն ժամանակ սիրով կայցեկեն գալոց. եթէ հենց

* Գարֆֆի - Վայցեր:

առաջին անգամից սիրեն ուսուցչին, այն ժամանակ անկեղծօրէն բաց կանեն նրա առաջ իրանց սիրտը: Իսկ եթէ ընդհակառակը ուսուցչի մէջ նկատեն սառնութիւն, խստութիւն, անարդարութիւն կամ կոպտութիւն, իսկոյն կ'ստորշեն նրանից և հէնց այդ օրուանից նրանց և ուսուցչի մէջ մի պատնէշ կը գոյանայ, որը և միշտ հեռու կ'մնէ այդ անմեղ սրտերի սէրը գէպի ուսուցչի: Այդ գէպքում գպրօցը մատաղ սաների աչքում մի զգուշի տեղ կգառնայ և նոքա գթկամութեամբ գպրօց այցելելով, կաշխատեն միայն ժամանակ սպանել, չսիրած մթնոլորդից շուտ հեռանալու համար: Դրանից յետոյ արդէն հասկանալի է, թէ ինչու առաջին օրը կարծածից աւելի մեծ նշանակութիւն ունի...

«Թող ուրեմն - ասում է Ա. Կոմենսկին - ուսուցիչը նմանուի լուսատու արեգակին, որը իւր անսպառ տաքութեամբ կենդանութիւն է ներշնչում բոլոր արտաբանների մէջ և թող առաջին օրը գպրօցում լինի ուրախութեան և հրճուանլի օր աշակերտների համար: Իսկ Կենդանի այդ մասին հեռեւեալ խօսքերն է ուղղում ուսուցչին. - «Հագիր այդ օրը ամենալաւ շորերդ և ինչպէս մի բարի հայր ուրախ գէմքով ընդունիր երեխաներին... Հաւատացած եղիր, որ այդ տպաւորութիւնը ընդմիշտ կ'մնայ երեխայի յիշողութեան մէջ, մի մոռանար, որ դու պարտական ես ոչ միայն օտարեցնել, այլ և կրթել, իսկ կրթութիւնը հնարաւոր է միայն սիրոյ միջոցաւ: ահա թէ որքան մեծ նշանակութիւն ունի դպրոցական առաջին օրը թէ աշակերտների և թէ ուսուցչի համար:

Սակայն խոստովանելով առաջին օրուայ մեծ նշանակութիւնը և նրա առաւելութիւնները, պէտք է միևնոյն ժամանակ հասկացած լինել, որ նոյնքան մեծ նշանակութիւն ունի և ուսուցչի ամեն մի վարմունքը: Նրա ամեն մի քայլափոխը պէտք է նախապէս կշռած լինի, նրա ամեն մի խօսքը պէտք է նախամտածած լինի և ամեն մի գէպքում նրա նշանաբանը պիտի լինի ազնւութիւն, արդարամտութիւն, խոհեմութիւն և հեռատեսութիւն: Այդպիսի ուսուցիչը երբէք չի ձանձրանայ, չի գանգատի իւր պաշտօնից, այլ ընդհակառակը հետզհետէ խորասուզուելով նրա գրաւչութեան մէջ, աւելի արգիւնաւէտ, աւելի օգտակար կգարձնէ իւր պաշտօնավարութիւնը: Իսկ եթէ ուսուցիչը զուրկ է յիշեալ յատկանիշներից, չէ ըմբռնել իւր կոչման վեհութիւնը և ուսուցչութեան վերայ նայում է իբրեւ մի արհեստի, նա բնականաբար պէտք է ձանձրանայ, պէտք է զգուշ այդ կարծեցեալ արհեստի միակերպութիւնից: Վերջապէս ով ձանձրանում է ուսուցչութիւնից - նա ուսուցիչ չէ, ում համար այդ պարտամունքը անբովանդակ է թւում, կնշանակէ նա չէ ըմբռնել իւր պաշտօնի իրական նպատակը, ով որ ուսուցչութիւնը միակերպ պարտամունք է համարում, նա նման է մեքենայական գործ կատարող հասարակ արհեստաւորին: Մի խօսքով գանգատուելով իւր պաշտօնից, ուսուցիչը միմիայն իրան է դատապարտում:

ԵՂԷՇԷ ԹՈՓՁԵԱՆ

(Հարունակի),

